# ՄԱՀԱԶԴ

Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Սինհոդոսական Հայրերը
Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը
Լիբանանի Կաթողիկէ Պատրիարքներու
եւ Եպիսկոպոսներու Համաժողովը (APECL)
Զմմառու Պատրիարքական Կղերի Միաբանութիւնը
ժորժ Թազա եւ ընտանիքը
եւ համայն Թազա ընտանիքը
կը գուժեն մահը

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՏԷՐ
**ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ
ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

որ պատահեցաւ հինգշաբթի, 25 յունիս 2015-ի
առաւօտեան ժամը 8:45-ին, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանին մէջ:

Եկեղեցւոյ թաղման կարգը եւ յուղարկաւորութիւնը
պիտի կատարուին երեքշաբթի, 30 յունիս 2015,
կ.ե. ժամը 4-ին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ-Սուրբ Եղիա
Աթոռանիստ եկեղեցւոյ մէջ:

Ապա հանգուցեալ Հայրապետին մարմինը
պիտի փոխադրուի եւ ամփոփուի
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Սրբոյ Կուսին Աւետման եկեղեցւոյ
պատրիարքներու դամբարանին մէջ:

Ցաւակցութիւնները պիտի ընդունուին
երկուշաբթի 29 յունիսին եւ չորեքշաբթի 1 յուլիսին
առաւօտեան ժամը 10:00-էն 13:00
եւ կէսօրէ ետք ժամը 4:00-էն 7:00
եւ երեքշաբթի 30 յունիսին
առաւօտեան ժամը 10:00-էն 13:00
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի դահլիճին մէջ:

Կիրակի 28 յունիսի կէսօրէն ետք ժամը 5-ին հանգստեան
սուրբ Պատարագ պիտի մատուցուի
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Սրբոյ Կուսին Աւետման եկեղեցւոյ մէջ,
որմէ ետք հաւատացեալները պիտի հրաւիրուին
վերջին հրաժեշտը տալու երանաշնորհ Հայրապետին
մինչեւ երեքշաբթի կէսօրուան ժամը 1:00



# ԿՈՉՆԱԿ 2.31

**28 ՀՈՒՆԻՍԻ 2015թ.**

*... նվիրված երջանկահիշատակ Հոգևոր Տիրոջ...*



## ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ ՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՏԱԼԻՍ ՍԻՐԵԼԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Շատ սիրելի, հարգելի Պատրիարքը չկա...

Սիրտս ճմլվում է, արցունքներս՝ խեղդում...

Անջնջելի հետքեր թողեց մեր հոգում. հայացքը բարություն էր ճառագում, ներկայությունը խաղաղություն էր սփռում շուրջը: Հուսով էինք, որ բոլոր փակ դռները կբացվեն մեր առջև նրա աջակցությամբ և մեր համայնքը վերջապես սեփական եկեղեցին կունենա:

Սակայն Տիրոջ կամքն այլ էր և Երկնային Արքայություն կանչեց իր հավատարիմ ծառային: Աղոթենք սիրելի Պատրիարքի հոգու համար և հուսանք, որ արժանի հետնորդ կլինի նրանից հետո և կշարունակի ներսես Պետրոս 19 պատրիարք կաթողիկեսի անավարտ գործերը: Աղոթենք, սպասենք, հուսանք...

Մարինա Յաղիկարյան

***

Ушел из жизни наидостойнейший представитель армянского народа. Выражаю свои глубокие соболезнования всему армянском народу...

Геворг Мовсесян

***

Роль Патриарха Нерсеса Бедроса 19 неоценима для нашего народа. Он сыграл большую роль в признании и осуждении геноцида 1915 года. Мы всегда будем нуждаться в нем как в Великом Духовном учителе. Его доброта и отзывчивость являлись нам примером. Мы храним в сердце светлый образ Духовного Наставника.

Хедожник, скульптор Фридон Асланян



## Священному Синоду Армянской Католической Церкви

**ДОРОГИЕ ВО ХРИСТЕ БРАТЬЯ!**



Примите мои глубокие соболезнования по случаю блаженной кончины Его Святейшества Католикоса-патриарха армян католиков Дома Киликии Нерсеса Петроса XIX.

Это тяжелейшая утрата для Армянской Католической церкви во всем мире и лично для меня. Его Блаженство известен, как один из ярких религиозных лидеров, который положил немало трудов проповеди Евангелия, утверждению в обществе христианских ценностей, а также воспитанию молодых священников. Мне посчастливилось оказаться среди тех выпускников семинарии, которые были рукоположены в священники Его Святейшеством.

27 апреля 2002 года останется в моей памяти на всю жизнь, когда Католикос-Патриарх с большой радостью собственноручно рукоположил меня в сан священника. Этот день стал моим вторым днём рождения, который я отмечаю каждый год.

Ещё много раз мы встречались с Его Святейшеством в Италии, Ливане и других странах и всегда он по отцовски был ко мне внимателен, спрашивал о трудностях и проблемах, помогая пасторским словом и делом.

Наша последняя встреча произошла ровно через 13 лет после моего рукоположения в сан священника, когда по моему приглашению Католикос приехал в Москву, где мы отмечали грустный юбилей - 100 летие геноцида армян в Османской Империи. К этой поездке он долго готовился и много раз в телефонных разговорах говорил, как он счастлив, что сбудется его мечта – он посетит с официальным визитом Россию, в качестве официального представителя Армянской Католической церкви в Москве.

Литургия в Костеле, которую провел Католикос, была воистину божественной! Прихожане, представители различных религиозных конфессий и гости, с восторгом и благодарностью вспоминали эту службу. Было ощущение, что под пение церковного хора в храм сошла благодать божья и радостью отозвалась в сердцах всех присутствующих. Католикос был счастлив! Российские прихожане слушали его проповеди с глубоким вниманием и покорностью.

Радость и волнение от торжественных событий этих дней не покидали Католикоса. Он повторял снова и снова, обращаясь ко мне – Ты реализовал мою мечту! Спасибо тебе!

Прощаясь, Его Святейшество обещал чаще навещать города России, прихожане которых так искренно и трепетно его встречали.

Я планировал новый визит Католикоса осенью этого года, когда меня сразила скорбная весть о его уходе из жизни.

К великому сожалению, по независящим от меня обстоятельств, я не смогу приехать в Бейрут, чтобы преклонить голову перед моим Учителем, Наставником, Пастером и Большим Другом, но в воскресенье, 28 июня в 15.30 состоится поминальная служба в память Святейшего Патриарха в Кафедральном соборе Непорочного Зачатия Пресвятой Девы Марии (ул. Малая Грузинская, 27/13).

Я, прихожане и приглашенные представители других религиозных конфессий

Вознесём молитвы Спасителю мира о вечном и блаженном упокоении светлой души Патриарха Нерсеса Бедроса XIX.

Светлая ему память!

С глубоким уважением и почтением,

Викарий Архиепископа Армянской Католической Церкви Москвы и всей России,

Настоятель прихода Местная религиозная организация «Святого Григора Просвятителя» Армянской Католической Церкви в г. Москве

Монсеньор Петрос Петросян



## ՆՆՋԻՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՄԲ ԱՍՏԾՈ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ, ՄԵՐ ԲԱՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՏԵՐ

Պատրիարքի հետ ծանոթանալու պատիվ ունեցա 2003թ. Բեյրութում Հայ Կաթողիկե եկեղեցու Բ համագումարին, որին ներկա էի որպես Ռուսաստանի կաթողիկե համայնքի պատվիրակ: Առաջին տպավորությունս անջնջելի հետք թողեց հոգումս, իր համեստությամբ, հայրենասիրությամբ, իմաստնությամբ պանդուխտ հայերիս հորդորում էր հավատ, հույս և համբերություն: Մտահոգում էր նրան մի շատ կարևոր խնդիր. «Հունձքն առատ է, մշակը՝ սակավ...»

Բախտ ունեցա տեսնել նրան Մեռնօրհնեքի արարողությանը Լիբանանում: Նա հիացած էի վարդապետներ Գևորգ Նորատունկյանի և Պետրոս Պետրոսյանի պտղաբեր աշխատանքով Ռուսաստանի հայ կաթողիկե համայնում: Մեծ ապագա էր գուշակում մեր համայնքի համար և լայն նախագծեր ուներ... ավա˜ղ...

Կարծես երեկ էր... մայիսի 25-ին, Հռոմի Լևոնյան վարժարանում Մոսկվայից մեկնած մի խումբ հավատացյալներով օղակի մեջ էինք առել սիրելի պատրիարքին, վայելում էինք նրա կենսուրախ և գոհ տրամադրությունը, երջանիկ էր, քանզի ամբողջացրել էր իր հոգևոր առաքելությունը, իրականություն էր դարձել երազանքը՝ այցելելով Ռուսաստանի հայ կաթողիկե համայնք:

Աստված հոգիդ լուսավորի, մեր սուրբ Հոգևոր Տեր...

Ելենա Սիմոնյան



# ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ 28.06.2015թ.

Հայ հոգևոր մշակույթը մեծ կորուստ կրեց ի դեմս հայ կաթողիկե համայնքի գերագույն ղեկավար, Պատրիարք Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Ներսես Պետրոս XIX-ի: Շուրջ 15 տարի է նա առաջնորդում էր Հայ Կաթողիկե համայնքի ավելի քան կես միլիոնանոց համաշխարհային բանակը:

Ս.թ. ապրիլի 26-ին Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցի կապակցությամբ, գերաշնորհ Հոգևոր Տերը, ընդառաջելով Հայ Կաթողիկե համայնքի հրավերին՝ առաջնորդ հայր Պետրոս Ծ.Վրդ.Պետրոսյանի առաջնորդությամբ, մեկնեց Մոսկվա: Այստեղ մեզ բախտ վիճակվեց մոտիկից ծանոթանալ Հռոմի Պապի ներկայացուցիչ Մեծն հայ հոգևորականի հետ:

Հայ Պատրիարքի զբաղեցրած դիրքերը Սրբազան Քահանայապետի մերձավոր միջավայրում, նրա ազդեցության ոլորտի գերխոշոր շառավիղները պատահականություններ չէին, այլև արդյունք էին նրա ուղեղի պայծառության և մտահորիզոնի լայնության, աստվածասիրության և մարդասիրության, մեծահոգության և լավատեսության, հայրենասիրության և հայասիրության:

Հոգևոր Տիրոջ առաջին և վերջին այցելությունը Մոսկվա Մեծ Եղեռնի 100ամյա տարելիցի կապակցությամբ նպատակ ուներ էր ոչ միայն կարեկցել և մխիթարել հայոց դարավոր վերքերը, ոչ միայն հավաստելու 20-րդ դարի սկզբին օսմանյան կայսրության թուրքերի անմարդկային ոճրագործությունները, այլ, որ ամենակարևորն է, հայ ժողովրդին հույս և հավատ ներշնչելու ապագայի հանդեպ...

Իմ սրտագին Ցավակցությունները համայն աշխարհի հայ քրիստոնյաներին...

Մոսկվայի Հայ Կաթողիկե եկեղեցու Խորհրդի անդամ, տ.գ.դ.
Արամ Ղազարյան



**Երջանկահիշատակ Տեր Ներսես Պետրոս ԺԹ Տանն Կիլիկիո Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարք**

**Կենսագրական տեղեկություններ**



Ծնվել է Կահիրեում, 1940թ. հունվարի 17-ին: Հինգերորդ զավակն է խորապես հավատացյալ և ութ զավակներով հայ ընտանիքի:

Նախնական և միջնակարգ ուսումը ստացել է Կահիրեի Ֆրերների վարժարաններում: Քահանայական ծառայության նվիրվելու փափագով մեկնել է Հռոմ և ուսանել Լևոնյան պապական հայ դպրեվանքում, Գրիգորյան համալսարանում:

Քահանա է ձեռնադրվել Կահիրեում, **1965թ. օգոստոսի 15-ին՝** ձեռամբ Կահիրեի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Ռաֆայել եպս. Պայյանի, և ստանձնել Կահիրեի փոխժողովրդապետի ծառայությունը՝ օգնելով Գերպ. Հովհաննես վրդ. Գասպարյանին, ով հետագայում դարձավ Հովհաննես Պետրոս ԺԸ Կաթողիկոս Պատրիարքը:

**1968-1990թթ.** եղել է Հելիոպոլսի ժողովրդապետը:

**1990թ. փետրվարի 18-ին** օծվել է եպիսկոպոս և նշանակվել Ալեքսանդրիայի հայ կաթողիկէ թեմի առաջնորդ:

**1992-97թթ.,** որպես Եգիպտոսի կաթողիկէ նվիրապետության անդամ՝ վարել է Եգիպտոսի Կաթողիկէ եկեղեցիների հովվական խորհրդի ընդհանուր քարտուղարի պաշտոնը:

Որպես Հայ Կաթողիկէ Եկեղեցու Եպիսկոպոսաց Սինոդոսի անդամ՝ **1993-95թթ.** կառավարել Պատրիարքական ատյանը, նաև նախագահել Քահանայական կոչումների պատրիարքական հանձնախումբը, իսկ 1994-99թթ. անդամ էր Հայ Կաթողիկէ Եկեղեցու մնայուն Սինոդոսի:

**1999թ. հոկտեմբերի 7-ին ընտրվել է Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց՝ Ներսես Պետրոս ԺԹ անունով:**

**1999թ. դեկտեմբերի 13-ին** Եկեղեցական Հաղորդություն է ստացել Հովհաննես Պողոս Բ Սրբազան Պապի կողմից:

**Գործունեության կարևոր հանգրվաններ**

**2001թ. հոկտեմբերի 7-ին** նրա խնդրանքով և Հայաստանի քրիստոնեացման 1700-ամյակի առթիվ Հռոմում Սբ. Հովհաննես Պողոս Բ Սրբազան Պապը «Երանելի» հռչակեց 1915թ. ցեղասպանության ժամանակ նահատակված Մարտինի առաջնորդ Բարձչն. Իգնատիոս արքեպս. Մալոյանին:

**2002թ. փետրվարին** Մոսկվայում հիմնել է առաջին հայ կաթողիկէ ժողովրդապետությունը:

**2005թ. հունվարին** Հոգևոր Տիրոջ խնդրանքով և օրհնությամբ Սբ. Հովհաննես Պողոս Բ Սրբազան Պապը մեծ հանդիսավորությամբ Վատիկանի Սբ. Պետրոս տաճարի արտաքին պատին տեղադրեց Սբ. Գրիգոր Լուսավորչի արձանը:

**2005թ.** Հոգևոր Տիրոջ հովանու ներքո Հռոմում կազմակերպվեց գիտաժողով՝ նվիրված Սբ. Գրիգոր Նարեկացու վաստակին: 2009թ. հոկտեմբերի 14-ին, նույն թեմայով գիտաժողով կազմակերպվեց Բեյրութի Քասլիք համալսարանում: Այս և մյուս գիտաժողովների նպատակը հիմք ստեղծելն էր՝ Նարեկացուն «Եկեղեցու վարդապետ» հռչակման համար:

**2006թ.** Հոգևոր Տերը այցելեց Արցախ.սա պատմության մեջ առաջին դեպքն է, որ Հայ Կաթողիկէ Պատրիարքը այցելեց Արցախ և ծանոթացավ կաթողիկէ արցախահայությանը:

**2008թ.** փետրվարին Հոգևոր Տիրոջ նախաձեռնությամբ Բենեդիկտոս 16-րդ Սրբազան Պապը Հռոմում մեծ հանդիսությամբ կատարեց բացումն ու օրհնությունը Սբ. Գրիգոր Լուսավորչի անվան հրապարակի:



Патриарх был счастлив во время всей литургии и после неё, с радостью фотографировался с прихожанами, живо интересовался жизнью в России и принимал поздравления – ведь семья армянских католических священников пополнилась еще одним молодым и прекрасно образованным священником.

И вот наша последняя встреча в апреле этого года, в Москве.

Он позвонил на мой мобильный телефон ранним субботним утром, поприветствовав, с радостью сообщил, что сбылась его мечта – он посетил Москву. Днем мы уже обедали вместе и обсуждали вопросы регистрации приходов в российских городах. Патриарх был весел, остроумен, вступал с нами в диалоги и шутил. Глаза его искрились счастьем, я ощущала теплоту и божественную благодать, которая от него исходила. Я никогда не видела его таким счастливым. Во время воскресной мессы, которую он провел в Костеле, все было очень торжественно, иногда казалась, что божья благодать сошла на всех присутствующих в Храме и это ощущение усиливалось ангельским пением хора.  На банкете Патриарх охотно знакомился с новыми людьми, которые были счастливы оказаться в его благодатной ауре и энергично отвечал на их вопросы.

Я знала, что он болен и плохо себя чувствует, но не могла понять -  откуда брались силы у этого самоотверженного и сильного человека для всех  тех, кто хотел с ним познакомиться.

Уход из жизни это всегда очень трагическое и печальное событие, а когда уходит близкий человек, то скорбь усиливается вдвойне. Для меня Патриарх стал именно таким – родным и любимым! Я счастлива, что благодаря и моих усилий Патриарх смог посетить Москву в качестве официального представителя московского Прихода АКЦ и реализовать свою мечту.

Глубока скорбь о его кончине. Это тяжелейшая утрата лично для меня и я всегда буду помнить выражение  его  добрых  и мудрых глаз, ощущать теплоту его божественной ауры.

Светлая ему память…

***Элеонора Этмекчян, Почетный член Церковного совета АКЦ***

**Вспоминая Патриарха Нерсеса Бедроса XIX.**
**25 июня, 2015**

Сегодня всё утро лил проливной дождь и, казалось, что город, а вместе с ним, и Вселенная о чём-то скорбят. И когда из Бейрута, от Нарега Луизияна пришла весть об уходе из жизни Патриаха, я поняла - о ком грустит Земля. Ведь ещё совсем недавно, в конце апреля мы встречались в Москве, когда все прогрессивное человечество отмечало грустную дату – 100 летие Геноцида армян в Османской империи.

Невольно в памяти всплыли все наши встречи …

Познакомились мы в Ливане, в октября 2009 года, когда в Бейрут приехали католические духовные лица и просто верующие, чтобы принять участие в торжественной литургии – освещение мирона. За несколько дней до начала церемонии мы посетили монастырь Зммар, где и произошло наше знакомство. Патриарх живо интересовался положением дел в России, регистрацией Московского прихода, шутил и искренне был рад гостям.



Через несколько дней состоялась сама литургия в Храме, которую служил Патриарх. Тут он был напряжен и сосредоточен. Четкими движениями он освятил мирон, который разлили по серебряным сосудам под божественное пение церковного хора.

После знакомства мы встречались еще дважды в Бейруте, одна из встреч – рукоположение в сан священника одного из талантливых семинаристов Грайра, которого после рукоположения стали называть Отцом Маштоцом – особенно запомнилась.



Հոգևոր Տիրոջ կաթողիկոսական բեղուն գործունեության կարևորագույն հանգրվանների պսակը եղավ **2015թ. ապրիլի 12-ին Սբ. Պետրոսի տաճարում Սրբազան Պապի ձեռամբ մատուցված Սբ. Պատարագը և Սբ. Գրիգոր Նարեկացուն «Եկեղեցու վարդապետ» Հայոց (Doctor Ecclesiae) հռչակելը**՝ Պապի կողմից: Այս պատմական կարևոր իրադարձությունը Հոգևոր Տիրոջ խնդրանքի, միջնորդության և ողջ Կաթողիկէ Եկեղեցում վայելած հարգանքի ու սիրո պտուղն էր, Հայ Եկեղեցու և հայ նահատակների հոգևոր մեծ վաստակի հավուր պատշաճի գնահատման ու արժևորման ուղղությամբ տարված հսկայական աշխատանքի արդյունքն էր՝ օգնությամբ և զորակցությամբ հայ կաթողիկէ Եպիսկոպոսաց Սինոդոսի և, իհարկե, Սրբազան Պապի վսեմ հովանու ներքո:

**2015թ. Ապրիլի 25 - մայիսի 1-ը** ժամանակահատվածում իրականացավ երջանկահիշատակ պատրիարքի վաղեմի երազանքը՝ հովվական այցելություն կատարել Ռուսաստանի Դաշնության հայ համայնք: Պատրիարքը ս.Պատարագ մատուցեց Մոսկվայի Անարատ Հղության Կաթողիկե Մայր տաճարում, օծեց Ցեղասպանության նահատակների հիշատակին կանգնեցված խաչքարը, դիվանագիտական հանդիպումներ ունեցավ քույր եկեղեցիների հոգևոր առաջնորդների հետ: Այցելեց հայ կաթողիկե համայնքներ Ռուսաստանի տարբեր քաղաքներում՝ Վենյով, Սոչի Դոնի Ռոստով և այլն, խանդավառված Ռուսաստանում հայ կաթողիկե համայնքի բազմաքանակությամբ և կազմակերպվածությամբ՝ Հոգևոր Տերը քաջալերում էր հայ քրիստոնյայի ինքնությունը պաշտպանելու նախաձեռնությունները: Իր կիրառական, խորիմաստ խորհուրդներով ուղղություն էր տալիս երիտասարդ համայնքի զորացման և հոգևոր արժեքների պահպանման առաքելության լավագույնս իրականացման ուղղությամբ:

*Օգտվելով՝ http://armenianchurchco.com/ կայքից*

## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ



Ցիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի:

Տանն Կիլիկիո Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարք Ամենապատիվ Տ. Ներսես Պետրոս ԺԹ-ի մահվան կապակցությամբ Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսաց սինոդոսին ցավակցական նամակ է հղել Սրբազան Ֆրանցիսկոս Պապը: Նամակում ասված է.

«Վերհիշելով մեր սերտ համագործակցությունը, որի գագաթնակետն եղավ Սբ. Գրիգոր Նարեկացուն Տիեզերական Եկեղեցու Վարդապետ հռչակելը, Ողորմածն Աստծուն եմ վստահում այս նվիրյալ հովվի հոգին, ով, որպես քահանա, անխոնջ ծառայեց իրեն հանձնված համայնքներին, ապա, որպես եպիսկոպոս, իր առաքելությունը կատարեց հավատքով և նվիրումով, նախ՝ Ալեքսանդրիայում, ապա՝ որպես Տանն Կիլիկիո Պատրիարք:

Աղոթքով միանում եմ բոլոր նրանց, ովքեր ողբում են այս հանկարծակի մահը, և ի սրտէ բոլորին ուղարկում եմ առաքելական օրհնությունս, մասնավորապես՝ Տանն Կիլիկիո Պատրիարքության եպիսկոպոսներին, հանգուցյալի ընտանիքին և բոլոր նրանց, ովքեր ներկա են լինելու նրա թաղման արարողությանը»:



## ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ ՆԱև ՀՀ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՍԱՐԳՍՅԱՆԸ:



Ուղերձում ասված է.

«Խոր ցավով ստացա Տանն Կիլիկիո Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարք Ներսես Պետրոս Տասնիններորդի մահվան գույժը:

Լինելով եռանդուն և հեղինակավոր հոգևոր գործիչ՝ տարիներ շարունակ նա մեծ դերակատարում ունեցավ սփյուռքում հայապահպանության, հոգևոր-մշակութային կյանքի աշխուժացման, հայրենիք-սփյուռք համակողմանի կապերի խորացման և սերտացման գործում:

Կաթողիկոս Պատրիարքը, որպես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի անդամ, իր մեծ և արդյունավետ մասնակցությունը բերեց հանձնաժողովի աշխատանքների պատշաճ կատարմանը:

Խորին ցավակցություն եմ հայտնում ականավոր հոգևոր առաջնորդի և հայ ժողովրդի արժանավոր զավակի մահվան կապակցությամբ»:

*Աղբյուրը՝ http://armenianchurchco.com/*